թէեւ իրօք 40 ձեռք ունի միայն:

Իր այդ 40 ձեռքերում բռնած է բուդդհայական նշանները, էմբլեմները՝ լոտոսի ծաղիկը, օրէնքի անիւը, արեւն ու լուսին եւ այլն: Նա կարծես իր ձեռքերը պարզում է ամեն կողմ, աշխարհի բոլոր կարօտեալներին. միայն երկուսը բռնած է կրծքին աղօթքի համար: Մի խիստ յուզիչ աւանդութիւն պատմում է, թէ նա մերժել է նիրւանա մտնելը՝ միշտ մարդկանց հետ մնալու ու նրանց օգնութեան ձեռք մեկնելու համար: Շարունակ քաշած վարագոյրների շնորհիւ մշտական աղջամուղջ է տիրում արձանների այդ սրահում եւ մի առանձին խորհրդաւորութիւն է տալիս աստուածների այդ ժողովին:

Հետաքրքիր է նոյնպէս Բուդդհայի փայտակերտ հսկայ արձանը, Դայ-Բուտսու, այսինքն Մեծ Բուդդհա, որ գտնւում է Կուանսօնի տաճարին կից: Արձանը ներկայացնում է միայն Բուդդհայի գլուխն ու ուսերը եւ հասնում է մօտ վաթսուն ոտնաչափ բարձրութեան:

Երկու կողմից սանդուխը տանում է նրա գլխի ետեւը, ուր խորան է շինւած:

Բոլոր տաճարներից աւելի ես Գիօնը սիրեցի, ուր եւ յաճախ գնում էի: Սրբատեղիի չորս կողմից գեղեցիկ սրբազան դռները (տօրի) տանում էին ներս: Գիօնը բաղկացած է իրար դէմ կառուցւած մի շարք շէնքերից: Հրապարակի մէջտեղում գեղեցիկ ծածկի տակ զետեղւած էին սրբութիւնները, որ մի քանի օրից յետոյ պէտք է տանէին ամբողջ քաղաքը թափոր տալու:

Ինքը բուն տաճարը մեծ չէ. աղօթողները ներս չեն մտնում: Առաջակողմի վանդակի մօտ դրած էր մի մեծ գանձանակ, ուր փող էին ձգում: Այդ փողը սովորական գործածական դրամը